

ԱՄԱՆՑՆԵՐԸ ԵՎ ԱՄԱՆՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Ս. 2. ԲԱՂԴԱՍԱՐՑԱՆ-ԲԱՓԱՆՑԱՆ

Արարատյան բարբառը զգալի հետաքրքրություն է ներկայացնում բազմազան ու բազմաթիվ ածանցներով, դրանց իմաստային այնպիսի դրսևորումներով, որոնք բնորոշ են այս ու նրա մերձակա այլ բարբառներին: Ածանցների ու ածանցման առումով Արարատյան բարբառը հանդես է գալիս որպես հայերենի բարբառների նույնանման երևույթների մի յուրահատուկ շտեմարան:

Արարատյան բարբառն ունի -ան, -բէ, -չ (-չը), թէր նախածանցները և -ած, -ակ, -ական, -ակի, -աղ, -այիւն, -ան, -անի, -անիք, -անց, -աշ, -ատ, -անուկ, -անք, -աց, -ացու, -գունի, -է, -էլէ, -էդ, -էղէն, -էն, -էնի, -էնիք, -էնց, -էնք, -էստ, -էրէն, -էրք, -էք, -թօ, -ծէս, -ծօռ, -ի, -իկ, -ին, -ինք, -ինք, -իչ, -իւ, -լի (-ալի), -լու, -լօշ, -ծու, -կան, -կէնի, -կօտ, -նան, -նանա, -նանց, -նար, -ման, -մանց, -մանի, -միշ, -մունք, -նակ (-անակ, էնակ), -նօց (-անօց, -օց), -չէք, -չի, -պան, -պատիկ, -վէր, -վօշ, -ստան, -վածք, -վանքի, -վար, -վարի, -վօք, -տի, -րան, -րար, -ցի (-ացի, էցի), -ու, -ուք, -ութուն (-քութուն, -ութիւն, -քէն, -ութէն...), -ուկ, -ում, -ույթ, -ունի, -ունց, -ուց, -ուրիկ (-ածուրիկ), -օվ, -օվի վերջածանցները հայկական ծագում ունեն, բացառությամբ -բէ, -լու, -միշ, -չի ածանցների:

— Բէ ժխտական նախածանցը արտահայտում է -ան-ի իմաստը, բայց համեմատաբար սահմանափակ կիրառություն ունի: Արարատյան բարբառի բոլոր խոսվածքներում էլ այն հանդիպում է փոխառյալ բառերի հետ. այսպես՝ բէֆայմ ճանհասկացողք, բէտամ ճանհամ, բէթստիք ճանպատկանդիր, բէմուրազ ճանիդձ, աներջանիկ, բէնէսաք ճանհաշիվ, բէփիք ճանշնորհք, բէխասաֆաք ճանհող, բէաբուռ, բէնամուս ճանամոթ, անպատկառ և այլն: Սակայն, քանի որ այս բոլոր բառերը հանդիպում են նաև առանց -բէ ածանցի, ուստի բարբառախոսների կողմից -բէ-ն գիտակցվում է իբրև առանձին ածանց: Դրան նպաստում է նաև այն, որ Արարատյան բարբառի խոսվածքներում -բէ ածանցով կազմված ձևերին զուգահեռ գործածական են նաև այս փոխառյալ բառերի՝ -ան նախածանցով կազմված ձևերը, որոնք առաջինների հետ միասին հանդես են գալիս բաղձյուսական հարադրություններում. ինչպես, օրինակ՝ անֆայմ-բէֆայմ, անտամ-բէտամ, անթասիր-բէթասիր, անխասաֆաք-բէխասաֆաք և այլն:

Թեև այս ածանցը կա Արարատյան բարբառի շատ ճյուղավորումներում, բայց ավելի լայն կիրառություն ունի այն խոսվածքներում, որոնք կրել են Բայազետի բարբառի ազդեցությունը, ինչպիսիք են Հոկոտեմբերյանի և Արովյանի շրջաններում առկա խոսվածքները:

Անհամեմատ քիչ է հանդիպում -լու ածանցը: Այն կա դարդըլու սվշտոտ, վիշտ ունեցողք, այբբլու ճարատավոր, արատ ունեցողք բառերում: Այս ածանցը շատ հազվադեպ հանդիպում է հայերեն բառերի հետ, ինչպես՝ նազլու ճնազ, նազանք ունեցող, նազանի:

— Այն թուրքական ածանցը կա փոխառյալ զօմամիշ *«չտես»*, չալմիշ *«շփոթված, շշկված»* բառերում, Այն հազվադեպ միանում է նաև հայերեն բայական հիմքերին. օրինակ՝ սասանմիշ *«սարսափահար, վախեցած, ցնցված»*: Այս ածանցն ունեցող բառերը անել, լինել բայերի բարբառային տարբերակների հետ կազմում են հարադրություններ. չալմիշ անիլ, բիլի, սասանսիլ անիլ, բիլի:

— Սրգ վերջածանցը հանդիպում է մի քանի փոխառյալ բառերում և արտահայտում է *«բէ ժխտական նախածանցի իմաստը. այսպես՝ հա՛ասրգ, արուսրգ «ամոթ, պատկառանք չունեցող»*:

— Կեհն- ծակոտկեն, սրգ, ճի, ապա դրում է *«... և զարմանալի է, որ Երեւանի բարբառում կա նույն մասնիկը շի ձևով և միայն մի բառում՝ կրէկշի «անադազօծող»*:

Մի փոքր այլ պատկեր է ներկայացնում *«շի փոխառյալ վերջածանցը»* Հր. Անառյանը նշում է, որ առհասարակ, ածանցներ քիչ են փոխառնվում և բերում է փոխառյալ ածանցների—մասնիկների օրինակներ:

— Չի ածանցը ևս, մյուս փոխառյալ ածանցների նման, Արարատյան բարբառում հանդիպում է փոխառյալ բառերի վերջում, ինչպես՝ *«Բէֆշի «խրախճասեր», քօփշի «թնդանոթածիգ», քանքանշի «խրամուղի փորող», լավաշի «ուղտապան», փինաշի «կոշիկ կարկատող», աքաքաշի «սայլապան», շիքաշի «մառնապետ», ալվանշի «ներկարար»*: —Չի ածանցն էլ *«բէ-ի նման, գիտակցելով որպես առանձին ածանց, հանդես է գալիս հայերեն բառերի վերջում. օրինակ՝ հանաքի, փրոնքի, ըրքուտի «բրուտ, բրուտագործ», ամբօլի «գուլթանի ամուր վարող անձ», զուտնաշի, իօսօմշի «հնձած խոտը կամ հացահատիկը փոքր խրճերով՝ խոռոմներով կապող անձը», բօստանշի, լօղվօղի «լողորդ» և այլն*:

Ածանցները Արարատյան բարբառում միարժեք և բազմարժեք են: Առաջին խմբի մեջ մտնում են այն ածանցները, որոնք մեկ խոսքի մաս՝ ածական, գոյական կամ մակբայ են կազմում: Երկրորդ խմբի մեջ՝ այն ածանցները, որոնք խոսքի զանազան մասեր՝ ածականներ ու մակբայներ, ածականներ ու գոյականներ, ինչպես նաև՝ ածականներ, մակբայներ ու գոյականներ են բաղադրում: Արարատյան բարբառում ինչպես և հայերենի մյուս բարբառներում բազմարժեք ածանցները ավելի մեծ թիվ են կազմում:

Գոյականներ են կերտում ու բառերին նվազական իմաստ տալիս հետևյալ ածանցները.

— Ակ. զրբառնակ, կօշնակ, աղբբաակ, կառմընջակ:

— Անիֆ. հաբսանիֆ, հրսանիֆ, մատանիֆ, մրտանիֆ:

— Անգ. գրվխանգ *«մաղվող հացահատիկի վրայից վերցրած խոշոր, հասկախառն մասը»*, սահմանգ *«սողորոթյուն»* (Ալավերգի, Նոյեմբերյան), նըշմառանգ *«դեմք»*, բաժանգ *«բաժանություն»*, ծըլանգ *«շորի ծվեններ»*:

— Առ. միայն մի բառում՝ գէդառ:

— Էլէ. միայն մի բառում՝ քաղումէլէ *«վարձ, որը տրվում է քահանային՝ մահվան արարողությունը կատարելու համար»*:

— Էնիֆ. միայն մի բառում՝ մանենիֆ «թաղման հանդես, ծես»:

— Էստ. գովէստ, պանէստ. երկուսն էլ գրական փոխառութիւններ են: Առաջինի համար բարբառը ավելի հաճախ գործ էածում գովի:

— Ինչֆ. միայն մի բառում՝ թալինչֆ «յուղը հալելուց հետո տակի մնացորդը»:

— Ինֆ. գողինֆ «անկողին», տէրինֆ, «աստված», դոծինֆ «լորձունք», միչինֆ «մի տեսակ խմորեղեն, որը թխում են զատկին, ջրօրհնեքին»:

— Իշ. բաշխիշ «նվեր», ամանլըվիշ «ամանը լվանալու կտոր», նըրխա-կօկիշ «փայտե հարմարանք, որով հարիսան խառնում են կոկելու համար». թօնրախառնիշ, կըրակֆաշիշ, ֆյովնանիշ «մոխիրը թոնրից հանելու հարմարանք»:

— Իֆ. տալիֆ «պարտք», ֆաշէլիֆ «տառապանք», առնելիֆ «մեկից ստանալու բան», հաֆնէլիֆ, ուտէլիֆ:

— Կալ. դօշկալ «կրծկալ», թէվկալ, դընշկալ, փէշկալ «գոգնոց»:

— Մանի. միայն մի բառում՝ դօլմանի «տենդ»:

— Նօց (-անօց, -օց). հընգնօց, արասանօց «քսան կոպեկանոց», կըշ-աանօց «կաշվի կամ շորի կտոր, որ իլիկ մանող կանայք կապում են աջ կող-րին, որ մանեկիս հագուստը չմաշվի», թէվնօց, վըզնօց, գըրկաւնօց «գրկի երեխա», բըրտընօց «այն վայրը, որտեղից բրուտը կավ է բերում», վառօց «ճիպոտ», կօվնօց, հօթընօց «այդ կենդանիները պահելու տեղեր», կալօց, իօտօց, «կալի, խոտ քաղելու ժամանակը», խըվըլօց «շարժում» և այլն:

— Մունֆ. արարմունֆ, շարշարմունֆ, ստիպմունֆ:

— Ձէֆ. կարողչէֆ, ձէվօղչէֆ, վարողչէֆ, ֆաղօղչէֆ, թըխօղչէֆ, որոնք բոլորն էլ նշանակում են այն վարձը, որը տրվում է այդ գործողութիւնները կատարելու համար:

— Պան. նախապան, հօթապան, խօգապան:

— Վածֆ. մօթվածֆ, բընըվածֆ «թթու», խօսվածֆ «խոսելու ձևը»:

— Ստան. Հայաստան, Վրաստան:

— Ութուն (ըթուն, -ութէն, -ութին). բըշութուն, նըմութուն, հարսընու-թուն, գէշըթուն, լավութուն:

— Ում. կըշտում, դատում «վաստակը», դընշում «հանգրստութիւն»:

— Ույթ. միայն մի բառում՝ բընույթ «բնավորութիւն»:

— Ունդ. սընունդ, ծընունդ:

— Ունֆ. փըշըւնֆ, պօշըւնֆ «մաղած հացահատիկից մնացած տականք»:

— Ուստ. արուստ, հօֆեպանուստ, գալուստ, կօրուստ:

— Ուտ. լօրուտ, շամուտ, կաղնուտ, բնարկուտ, մօրուտ, մօշուտ, մա-ցառուտ, ցաֆուտ, նըլկուտ, մամխուտ, աղշուտ, տանձուտ:

— Ուրթ. ժըղօվուրթ:

— Օն. բըրթօն «ճաշի մէջ բրդած հաց», ծամօն «մաստակ», կըրնօն «մնացորդ», կըրթօն «ծղոտ»:

— Օրթ. նամփօրթ, նախըրօրթ, փօխնօրթ «սպիտակեղեն»:

Ածականակերտ ածանցներ.

— Զ. -շը. չըբէր «ամուլ», չընաս, չըտէս, չընավան, չունէվօր:

— Ային. դըրախտային, աստվածային, յէրկնային, սրանք գրական փո-խառութիւններ են:

— Անի. թվանի. գրվանի, ընկնանի, վտանի, հօֆանի, լիզվանի: Ա-
առջին չորս օրինակներում ու նման այլ կազմութիւններում սկզբից դրվում է
թիվական. իրէք վտանի, շօք ընկնանի և այլն:

— Ատ. պօշաա, կրոնատ, թէվատ:

— Դար. ցավագար ժիայն աչքերի համար՝ հիվանդա:

— Դու. արէվգունի շարեոտ, արեկոդա:

— Է. փէդէ, օսկէ, արծաթէ:

— Լդ. կանթէլ ռունկ ունեցող ամանա:

— Ժեռ, -ժօռ. կարմրեաթէռ, ժօռ, դէղնաթէռ. ժօռ. կապտաթէռ, ժօռ,
որոնք բոլորն էլ ունեն -ափուն ածանցի իմաստը, միայն մըքնաթէռ-ժօռ
նշանակում է. մութ:

— Լօշ. դանդալօշ շտհաս, հիմար, դանդաղաշարժա:

— Կէնի. իշակէնի ճիշաբնույթ մարդ, մեղրակէնի թաղցրա:

— Կօտ, -օտ. վախկօտ, ամըչկօտ, հրմօտ ճիսսանփա, ճհում, փաղցրօտ
օմի բիշ քաղցր, թրքվօտ մի բիշ թթուա:

— Յալ. անգյալ, դրական փոխառութիւն է, անկեալ գրաբարյան անց-
յալ դերբայից:

— Վօշ. հազվադեպ է հանդիպում. կա ակոավօշ շտգեղ ատամներով
մարդ բառում:

— Ունի. զօղունի ճծաժուկ, գաղտնաբար» և մէրունի ճծու ածող հավ,
ծնու ոչխարա:

— Ուսուլ. արտահայտում է գրական հայերենի -ափուն ածանցի իմաս-
տը. հանդիպում է յառնուսուլ, փաղցրուսուլ բառերում, որոնք նշանակում
են դառնափուն, քաղցրափուն:

— Ուրիկ. -աճուրիկ. ունի -աճ ածանցի իմաստը. կա տըվաճուրիկ,
տըվուրիկ, գըթաճուրիկ բառերում: Առաջինը նշանակում է շնորհ, վերուստ
տըված մի հատկանիշ. գըթաճուրիկ՝ գտնված, ձրի ձեռք բերված:

— Օ. ջաիօ մեծ, անճոռնի ատամներով մարդ, կյառօ խուլ, կէռօ մի
կողմի վրա թեքված, ծուռա:

— Օվ. մըտօվ լալ հիշողութիւն ունեցող, ձեռով ճշորհքով, լալ
գործ անող, վօտով-ձէռով ճշարժուն, ճարպիկ, արագաշարժ, լէզվով ճար-
տարախոս, շատախոս, հացով ճշուրասեր» և այլն:

— Օվի. քըցովի թաղցր, շաքար գցած թեյ, շինովի, բէրովի, դրովի և
այլ բառեր, որտեղ -օվի ածանցը արտահայտում է -աճ ածանցի իմաստը:

Մակբայակերտ ածանցներ.

— Նակ. կընգընակ. ճնավարի, կնաբարո», էրէխանակ, ջօշանակ,
մըշկընակ և այլն, որոնցում -նակ ածանցը ունի պես, նման իմաստները:

— Ակի. միայն մի բառում՝ բէթէվակի:

— Անց. գըլիանց ճսկբից, վաղուց, հնուց իվեր», մէկանց միանգա-
մից», տըկանց, կօխփանց, վըրավանց, որոնք բոլորն էլ տեղի մակբայներ են՝
տակից, կողքից, վրայից նշանակութիւններով:

— Էնց. ըսէնց, ըտէնց, ընէնց, թէնց: Մագել է հէնց ճպես» բառից՝ հնչու-
նափոխվելով: Այդ պարզ երևում է Լոռու և այլ խոսվածքներում հանդիպող
սընէնց, տընէնց. նընէնց դերանվանական ձևերից, որոնք առաջացել են ցու-
ցական էս, էտ, էն դերանունների հնչյունափոխված ձևերի վրա հէնց բառը
ավելացնելու միջոցով:

— Ման, —մանց. միանում են բայաբներին. կըզման, կըզմանց, վագման, վագմանց, ֆէլման, ֆէլմանց, լալման, լալմանց:

Այս ածանցը հատուկ է Արարատյան բարբառի Հոկտեմբերյանի և Կոտայքի խոսվածքներին. արտահայտում է —ած ածանցի և —էն, —օվ մասնիկների իմաստները. կըզման—կոացած, կոանալով, վագման—վագելով:

— Ութ. պըստկուք փոքրուց, փոքր ժամանակվանից» ջօշուք ամեծ եղած ժամանակից», ախշըկուք աղշիկ, օրիորդ եղած ժամանակվանից»:

Ածականակերտ ու մակըայակերտ ածանցներ.

— Ան. անխելք, անգրլօխ, անգրլիլ ասուանց գրելու, չգրած», անուտէլ ակերած, առանց ուտելու»:

— Էն. կազմում է ձևի մակբայներ, վագէլէն, լալէն, իօսալէն: Արտահայտում է գրական հայերենի —անի ածանցի իմաստը. վօտնէն, ձէռնէն, գրլխէն. այսպիսի կազմություններից առաջ միշտ գրվում են թվականներ. էրկու վօտնէն, յօթ գրլխէն, շօրս ձէռնէն և այլն:

— Ին. կազմում է ձևի մակբայներ. չագաթին լալվ, կարգին», ուզածին, ջընօրին, հալսնածին ասվանած, հավանելու պես», նըհախին թիղոր»:

— Լի, ալի. յէղալի, մըսալի:

— Մու. միայն մի բառում՝ շինծու:

— Հան. շապկահան ասպիկը հանած, փոխաբերաբար՝ հիմար, խենթ», վօսկըռահան, ֆօհահան, վօտնահան աստները հոգնած» նույն նշանակությամբ՝ քէվահան, մէշահան, ռավօղահան աստվոտյան շուտ», ցգիշերով, դեռ չլուսացած»:

— Հար. պըռտահար ակթը», գօսկահար, միշահար, չօհահար ամինչև մեջքը, գոտին, ծունկը»: Հըրսընֆահար հարսանիքով տարված, հարսանիքով գրաղված»:

— Ջի. հանաֆչի ակատակաբան, կատակասեր», ֆէֆչի ցզվարճասեր, խրախճասեր»:

— Վանֆի. բօլօրվանֆի ակլոր, շուրջանակի»:

— Վարի. էրէխավարի, ջօշավարի, աղավարի, մըշակավարի, հօտաղավարի:

— Վէր. հանաֆվէր ասանքով»:

— Տի. միայն մի բառում՝ ջըրտի, ջըրդի:

— Ունը. կօթռունը ակոթի կողմը հաստ վարունգ»:

— Էրէն. հայէրէն, վըրսցէրէն:

Գոյականներ, ածականներ ու մակըայներ կերտող ածանցներ.

— Ած, կէրած, խըմած, ֆընած, հառփած, կօտօրած, նըշանած անշանած»:

— Աղ. ձանձաղ ածանծաղ՝ թեթևսովիկ», հօտաղ ատավարած», մատաղ:

— Ան. իօսան, իըման, վագան, կըցան ակցվող կտոր», կակղան փափուկ, ազգրի միս», խօզալարան թիղները պահելու տեղը», մըղան ակալած ցորենը մի տեղ կուտակելու հարմարանք»:

— Ացու. մըսացու, սուջուխացու, կախանացու, հէրացու, մէրացու, ֆիրացու, ախպէրացու:

— Բար. զըգբար քթամբակ գզող անձնավորություն, կիսբար ակիսովի»:

— Էնի. ջըլօրէնի, աանձէնի, գօմշէնի ակոպիտ, անտաշ»:

— Ի. կըրակիսառնի, բօնրախառնի, տանձի, բալի:

— Իկ. փրլավֆամիկ, նրբիսակօկիկ, ամանլըվիկ. տափալիկ, ցածիկ, նըղտիկ «խաոր», սըլվըլիկ «արագաշարժ, դուրաշարժ»:

— Ական. իրական «բարեկամ, ազգական», տընական «տնական, տնվոր-ներ», գէղական «գյուղի, գյուղացիներ», հարիրմանէթական «հարյուրուոր-լիանոց»:

— Վօր. համավօր «համեստ», լօղվօր, գօզլըկավօր «ակնոցավոր», գէ-րանդավօր, բախտավօր, թէվավօր, դիմավօր «դիմացի», քըշվօր:

— Ուն. խըռուն, դըռուն «խոռոց, դռոց», գըլխուն «շատ լիքը, լի», հա-ֆուն «հագնված» և այլն:

Ինչպես հայերենի մյուս, այնպես էլ Արարատյան բարբառն ու նրա ճյուղավորումները աղքատ են նախածանցներով: Ամենից առաջ, բարբառում չկան —ույ, —լս, —տ (—տը) ժխտական նախածանցները: Դրանց փոխարինում է —ան բազմաթեք ածանցը: Սխալ կլինի ասել, սակայն, որ վերոհիշյալ ժխտական նախածանցները բարբառում, առհասարակ, չկան: Ականջալուր լինելով բարբառախոսների զրույցներին՝ նկատում ենք, որ նրանք օգտագործում են տըմարդի, դըծգօյ (դժգոհ), ապէրախտ, ապէրախտութիւն, —ութուն, —ըթուն բառերը, որոնցում առկա են վերորերյալ ածանցները. այս բառերը գրական վոխառություններ են և բարբառախոսների կողմից գրանցում եղած ածանցները չեն գիտակցվում, դրանցով նոր բառեր չեն կազմվում: Այդ բա-նը հավաստվում է նաև տըմարդի բառի հնչյունական պատկերով: Մարդ բա-ռը բարբառում կա մարք ձևով, որտեղ ձայնեղ պայթական դ > թ, իսկ տըմար-յի բառում դ—ն մնացել է անհնչյունափոխ: Նույն ձևով, աշխարհաբարում չի ընկալվում ու նոր բառեր չի կազմվում —հու «լավ» մասնիկից, որը առկա է հլու, հմուտ բառերում:

Բարբառում, բնականաբար, չկան գբ, բադ, դէմ, դէր, ենթա, համ, հակ-մակ, համա, հաւ, նեւ, վեւ, փախ և այլն նախածանցներ, որոնք դասական հա-յերենում ևս չեն եղել, հետագայում կազմվել ու գործածության մեջ են գրվել հունարան դպրոցի հեղինակների կողմից:

Արարատյան բարբառում, ինչպես և հայերենի բարբառների մեծ մա-սում չկան —ած, —այն, —անուտ, —գին, —ավուն, —իցս, —կեն, —յա, —աութ, —առեն, —ուհի, —չյա, —վետ (—ավետ) և այլ վերջածանցներ, որոնց իմաստները բար-բառում արտահայտվում են այլ ածանցներով կամ՝ նկարագրական եզանա-կով:

Դրա փոխարեն, բարբառն ու նրա զանազան ճյուղավորումները ունեն մի շարք ածանցներ, որոնք չկան մեր գրական լեզուներում: Ահա այդ ածանցնե-րի ոչ լրիվ ցանկը. —ացուկ, —անուկ, —վսնց, —գունի, —էլե, —էն, —էնակ, —ժօռ, —ժէռ, —լօշ, —կէնի, —ման, —մանց, —մանի, —չէֆ, —չի, —վանֆի, —վօշ, —վէր, —ուր, —ունց, —ուսուլ, ուրիկ (—ածուրիկ), —ֆի, —օ, —օն, —օշ և այլն:

— Ացուկ—ը միանում է բայերին, կազմում գոյական. տալացուկ «պարտք», առնէլացուկ «մեկից ստանալու բան, ստանալիք», գալացուկ «գալիք, ապագա, գալու, պատահելու բան, երևույթ»: Այս ածանցը բնորոշ է Արա-րատյան բարբառի Շամշադինի, Ազիզբեկովի, Եղեգնաձորի, Իջևանի, Դիլի-ջանի, Կրասնոսելսկի, ինչպես նաև Խանլարի, Շահումյանի, Դաշքեսանի, Շամխորի (Ադրբեջան), Մառնեոլիի (Վրաստան) խոսվածքներին, որոնք Ղադարաղի բարբառի ազդեցութունն են կրել: Այս մասնիկով նշված խոսվածքներում կազմվում է նաև ապառնի դերբայը. ասըլացուկ էմ.

առնելացուի էմ, առնելացուի էմ առնելու էմ, առնելու էմ, վերցնելու էմ, տալու էմ»: Բարբառի -էն ածանցը, միանալով գոյականներին ու մարմնի մասերի անվանումներին, հատկանշում է դրանց առկայությունը և արտահայտած իմաստով հավասարազոր է -ավօր, -անի ածանցներին: Այս ածանցով կազմված բառերից առաջ մեծ մասամբ դրվում են թվականներ. էրկու վօռնէն, էրկու թէվէն, յօթ կանթէն (պղինձ) և այլն:

— էն-ը միանալով ժամանակի անվանումներին, կազմում է մակբայներ և արտահայտում -ական ածանցի իմաստը. տարէնը, շափթէնը, օրէնը օտարեկան, շաբաթական, օրական: Այն արտահայտում է նաև տարիքի իմաստը. այսպես՝ հինգ տարէնը մի տղա բխա ունի: Հետաքրքրականն այն է, որ այս երկու իմաստները դրսևորվում են Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներում: -էն-ը, -ավօր, -անի ածանցների իմաստներ ունի Արարատյան բարբառի Հոկտեմբերյանի և այն խոսվածքներում, որոնք Բայազետի բարբառի ազդեցությունն են կրել (Կոտայք, Գառնի), իսկ -ական ածանցի իմաստն ունի Ալավերդու, Նոյեմբերյանի, Շամշադինի, Սպիտակի, Կրասնոսելսկի, Իջևանի, Դիլիջանի ու Շահումյանի (Աղբեջան), Մառնեուլիի (Վրաստան) խոսվածքներում: Այս ածանցը միանալով բայաբաններին կազմում է մակբայներ. վագէլէն Վագեղով, հագալէն, լալէն և այլն, իմաստ, որ ունեն Արարատյան բարբառի բոլոր խոսվածքները:

— Նակ (-անակ, -էնակ) ածանցը հատուկ է Արարատյան բարբառի Հոկտեմբերյանի շրջանի բոլոր խոսվածքներին. այն կա նաև Կոտայքի շրջանում առկա Զառի, Ակունքի, Գառնիի խոսվածքներում. այն միանում է ազգությունների անվանումներին և արտահայտում է -էրեն ածանցի իմաստը. հայէնակ, թուրէնակ, ֆրդէնակ: Նույն իմաստը բարբառում արտահայտվում է նաև -էվար ածանցով. հայէվար, ֆրդէվար, թուրէվար և այլն:

— Նակ ածանցը դրվում է գոյականների, ածականների վրա. արտահայտած իմաստով հավասարազոր է -վարի ածանցին. ջօջանակ, էրէխնակ, աղանակ, կրնգրնակ, պրգրգնագ և այլն:

— Ժօռ և Ժէռ ածանցները, որոնք նույնի հնչյունական տարբերակներն են, դրվում են գույների անվանումների վրա և արտահայտում են -ավուն ածանցի իմաստը. դէղնածէռ, ժօռ, կարմրածէռ, ժօռ, կապածէռ, ժօռ: Միանում են ամպ բառին և արտահայտում է -մած ածանցի իմաստը՝ ամպածէռ, ժօռ:

— Ավուն ածանցի իմաստն ունի նաև բարբառային -ուսուլ ածանցը. դառնուսուլ, ֆաղցրուսուլ:

— Ման, -մանց ածանցները չունեն համընդհանուր տարածում: Առկա են բարբառի այն խոսվածքներում, որոնք Բայազետի բարբառի ազդեցությունն են կրել: Առհասարակ, այս ածանցները հատուկ են կը ճյուղին պատկանող՝ Մշո, Վանի, Սասունի բարբառներին:

Բայազետի բարբառի ազդեցությունը կրած՝ Հոկտեմբերյանի ու Կոտայքի խոսվածքներին են հատուկ -չէֆ՝ վառօղչէֆ, ֆաղօղչէֆ, ցանօղչէֆ, կառօղչէֆ, բեռօղչէֆ Վարձ, որը տրվում է այդ գործողությունները կատարողներին, -վանֆի՝ կլորվանֆի, բօլօրվանֆի «կլորավուն, կլոր», -վէր՝ ճանաֆվէր «կատակով», -ուրիկ՝ գրթածուրիկ, գօղածուրիկ ածանցները:

Դրական լեզվի և Արարատյան բարբառի բառակազմական այս միջոցների ու ձևերի համեստությունը երևան է հանում երկու հակադիր միտումների՝ Մի կողմից որոշ ածանցներ արտահայտում են ավելի քիչ իմաստներ՝ բան դրական հայերենում, ինչպես, օրինակ՝ «ակ ածանցը չունի այն նշանակությունը, ինչպիսին կրկնակ, հիսնակ, եռյակ և այլ բառերում ունեցած նշանակությունները:

— Ական-ը չի արտահայտում այն իմաստները, ինչ արտահայտում է իծական, մեղվական, առնական, խմբական, հոգեկան, զգուշական, ֆեֆշական, օւրախական, հեգեկական, ֆսանական, հիվանդական ու այլ բառերում: Մյուս կողմից, վերոհիշյալ երևույթին հակառակ, հայերենի մի խումբ ածանցներ բարբառում արտահայտում են ավելի շատ իմաստներ, քան՝ աշխարհարարում: Այսպես.

— Ան ժխտական նախածանցը հնչունական տեսքով ամենուրեք նույնն է՝ նույնիսկ այնպիսի բարբառներում, որոնցում ա ձայնավորը շատ է փոփոխվում (Մեղրի, Ագուլիս): Ղարտբաղի բարբառում միայն հանդիպում է այս ածանցի տարատեսակը՝ գընա խօխան ախոս արա² Ձգնա երեխային անխոս արա, լոցերուս:

— Ան ածանցը Արարատյան բարբառում ևս, միանալով գոյականներին, կազմում է ածական՝ ժխտական իմաստով, ցույց տալով առարկայի, իրի, երևույթի բացակայությունը, միաժամանակ՝ մի բան չունեցող, դրանից զրկված անձնավորություն, անդամակ, անաթօռ, անանձրէվ, անխէլֆ, անտուն, անբան, անխիղն: Ակնհայտ է, որ Արարատյան բարբառով խոսողները, ինչպես և այլ բարբառախոսներ, առավելությունը այս դեպքում տալիս են բաղադրյալ կազմություններին: Ան-ով ածանցվածների փոխարեն օգտագործում են առանց բառով և ժխտվող գոյականի սեռական հոլովով հարադրված կազմությունները. առանց դանակի, առանց աթոռի, առանց խէլֆի, առանց խխնի և այլն: Չնայած նման սահմանափակմանը՝ ան նախածանցը բարբառում ավելի լայն կիրառություն ունի, քան՝ գրական լեզվում: Այն միանում է բայանուններին՝ կազմում մակբայներ. անհատնում, անդընջում: Ավելանալով անորոշ դերբայներին՝ արտահայտում է առանց բառի և չը, չ նախածանցի իմաստները. անգրբիլ «առանց գրելու, չգրած» անուտիլ «առանց ուտելու, չկերած», անմաֆրիլ «առանց մաքրելու, չմաքրած». օրինակ. անմաֆրիլ տունը թօղ արավ, կընաց. (Ծրևան), անկըրիլ թուխտ տու: Նամակը անկըրիլ մընաց և այլն: Ան-ը. անթօռալ, անէթալ, անդօղալ և այլ լծորդության այլ բայերում ունի միայն առանց-ի նշանակությունը. առանց գոռալու. առանց դնալու և այլն, սակայն այն կազմությունները, որոնցում այս նախածանցը միաժամանակ չ-ի և առանց-ի իմաստներն է արտահայտում անհամեմատ շատ են: Այս նախածանցը դրվում է ենթակայական դերբայի վրա և արտահայտում բացակայություն. անէկօղ-անգընացօղ տունը ընչի՞ ա պէտկը: Անհասկացօղ, անբանօղ և նման այլ բառերում նշանակում է չհասկացող. առանց հասկացող, չաշխատող, անաշխատ: Ապառնի դերբայի ձևերի վրա դրվելով կազմում է ածականներ, մակբայներ. անտանէլու, անվէդանալու, անհավատալու:

² Հր. Աճառյան, Գավառական բառարան, էմինյան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիզ, 1913:

Ան ժխտական նախաժանցը կիրառման ու նշանակությունների բազմազանությամբ առնչվում է գրաբարին, որտեղ այն լայն կիրառություն է ունեցել: Միանալով անցյալ դերբայներին կազմել է ածականներ, անգեաեղեալ չլավ չգետեղված, անգրեալ՝ չգրաթ, անթաղ՝ չթաղված, անթուրծ՝ չըթրծած և այլն: Գրաբարի ու բարբառի առնչակացությունն են ցույց տալիս և գրաբարյան անհավ չհալած, ոչ հալած, առանց հալելու, ինչպես և անծառավ, անավագ, անբարի, անլայն, անհպարտ, անգովելի, անղանդաղելի ձևվերը, որոնցում ան նախաժանցը արտահայտում է ոչ-ի իմաստը՝ ոչ ծառավ, ոչ ավագ, ոչ բարի և այլն: Գրաբարում ևս, ինչպես և բարբառում այն դրվել է ենթակայական դերբայի ձևերի վրա. անխնդրող «ոչ խնդրող», անգոհացող «չգոհացող» և այլն: Ինչ վերաբերում է գրաբարյան անառակ, անաշխարհ, անբաց, անաշխարհիկ ձևերին, ապա ան նախաժանցը՝ այս բառերին տվել է այլ նշանակություններ, անառակ՝ «դժվար, անհնար արձակելի», անաշխարհ՝ «այս աշխարհից չլինելը, հանդերձյալ աշխարհից լինելը», անբաց՝ «ոչ բացելի»:

Բարբառում լայն կիրառություն ունի և -ան վերջածանցը, որը միանալով բայաբների, կազմում է գոյական. ցաֆան «երկրագործական գործիք», մրդան «տախտակե հատուկ հարմարանք, որով կախած ցորենը կուտակում են մի տեղ, քամելու՝ քամուն տալու համար», կապան «երիզ, որով օրորոցի երեխայի ոտներն են կապում», կօկան «հարմարանք, որով բրուտը հարթում է կավե ամանները», ֆէրան «քերիչ, որով արորի վրա հավաքված ցեխն են քերում»: Դարձյալ բայաբներին միանալով, կազմում է ածականներ, հալան, վագան, պլաուտան «շրջիկ, շատ ման եկող», նրաան «աշքերը շուտ-շուտ թարթող»:

Նույն խոսքի մասն է կերտում միանալով բնաձայնական բառերին և դրանցից կազմված կրկնավորներին. խըռան, ֆըսան, խըխըռան, ֆըսֆըսան: Միանալով մէջ կապին և կակուղ ածականին՝ կազմում է միջան «միջունք» և կակղան «փափուկ միս, միայն փափուկ միս»:

— Նօց (-անօց, -օց). Մ. Աբեղյանը նշում է, որ այս ածանցն ունի հետևյալ գործածություններն ու իմաստները. 1. ցույց է տալիս մարդկանց, առարկաների տեղը. դպրոց, հյուրանոց, խննթանոց, գերեզմանոց. 2. ցույց է տալիս գործիք. խարտոց, քերոց, 3. նշանակում է հագուստներ. վղնոց, գլխանոց, գդալնոց. 4. արժեքի չափ. հինգ ռուբլիանոց. 5. բնաձայնություն և գործողությունն անուն. խրխոց, քաշքշոց³:

Արարատյան բարբառում ու նրա խոսվածքներում, թվարկվածներից բացի, այս ածանցով կազմվում են գոյականներ. գրկանօց «գրկի երեխա, ծծկեր», ծրծանօց «ծծկեր երեխա», ցույց է տալիս որոշակի ժամանակ. հրաֆվառօց «երեկո, լույսը, ճրագը վառելու ժամանակ», կրաֆվառօց՝ նույն նշանակությամբ, կալօց, ֆաղօց, հընձօց, էտօց, խօտօց, որոնք բոլորն էլ նշանակում են ժամանակ՝ կալի, քաղի, հնձի, էտելու, խոտ քաղելու ժամանակ: Դրվում է մի քանի բայաբների վրա. մաշօց «շորի ծալքերում, մաշվելուց առաջացած նյութ», կօթօց «պարսավանք», էրօց «տոնդ», շընէրօց, գէլէրօց բառերում և դրանցից կազմված հարադրությունում նշանակում է ասնխնամ թողնված, անկարգ, խառնակ վայր». դրվելով գոյականների վրա, թվականների հետ միասին՝ նշանակում

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 263—264.

ի տարողության չափ. իրե՛ք վէդրաճօց, չօրս փըթաճօց. ճինգ խալվաճօց. չլվկլով մնե՛ր Բալի բնի վրա՝ ցույց է տալիս այն անոթը, ամանը, որի մեջ լածու՛ն են մերում՝ մէրօց:

— Վւօր, —աւօր ածանցը աշխարհաբարում բառին տալիս է մի բան ունեցողի նշանակություն, բաց բարբառում ունի և այլ նշանակություններ. զլղավօր «գյուղացիները, բոլոր գյուղացիները». նույն նշանակությամբ՝ տընավօր, տընվօր. վերջինս նշանակում է և վարձակալ. ճամէցեֆավօր «հացկերություն, հարսանիքի հրավիրվածներ»:

— Ացու ածանցը, բացի իբ ունեցած հիմնական նշանակություններից, միանում է բոլորակցական հարաբերություններ արտահայտող բառերին. ուրացու, մէրացու «խորթ հայր, մայր», ախպէրացու, փրացու «որպես եղբայր, որպես քույր ընդունվող անձնավորություն»:

— Ոկան ածանցը կոռու խոսվածքներում միանում է մէկ բառին՝ կազմում մէկական «մասնավոր» ածականը. կոլխոզի բ'անը լավըն ա, մէկականի բ'անն ա ո'րժաւ, ապրանքի կեր նաւըմ չի:

Ալիդրեկովի, Նղեգնաձորի խոսվածքներում, Շամշադինում, Իշեանում, Կրասնոսելսկում ճարի մանէթական, ճինգ ճագար մանէթական, փրան մանէթական բառերում ու նման այլ կազմություններում այս ածանցը ունի —անօց, —նօց—ի իմաստը:

— Իկ ածանցը կիրառություն է ունեցել և ունի մեր լեզվի բոլոր շրջաններում, ինչպես և բոլոր բարբառներում: Հր. Աճառյանը վկայում է շատ հնադույն անուններ, որոնցում առկա է այս ածանցը, ինչպես Հրաւնուշիկ, Զուիկ, Ղազարիկ⁴ և այլն: Որքան էլ մեծ լինի այս ածանցի գործածությունը գրական հայերենում, այն չի կարող հավասարվել բարբառներում ունեցած նրա դերին: Մ. Արեղյանի «Ժողովրդական խաղիկները» դրա լավագույն վկայությունն ու շտեմարանն է. այստեղ հանդիպում ենք թանգիկ, խաբրիկ, ախպրիկ, փախցրիկ, ցածիկ, ձնիկ, սեւսրբիկ «մաքուր», դարդիկ, մաքմաքիկ և այլ բառերի: Արարատյան բարբառի Հոկտեմբերյանի խոսվածքներում այս ածանցը հանդիպում է մէղրիգ, չամչիգ և նույնիսկ՝ մաճիգ «մահ» բառերում. աստված մի անաւադ մաճիգ տա ընծի: Միանալով մակբայներին, այն չի փոխում նրանց խոսքի մասային պատկանելությունը և իմաստը. ճիմիկ, ճրէտիկ, ճրէտիկ, ճրէնիկ, իսկ մի քանի կրկնավորների հետ կազմում է ածական. սըլվընիկ, խըլվընիկ «գյուրաշարժ», վըլվընիկ «շատախոս, դադախոս»: Դըրվելով մի քանի բայերի վրա կազմում է գոյական՝ գործիք նշանակությամբ. փըլավֆամիկ, ամանըլիկ, կըրակֆաշիկ, դանակըրիկ, փաբաաիկ «կտոր, որով հաց թխելուց առաջ մաքրում են թոնրի կողերը»: Հայերենում բավական տարածված ու լայն կիրառություն ունի —ուկ ածանցը, որը բառերին տալիս է նվազական, քնքշացնող իմաստ. ափօռուկ, աափուկ, նագուկ, ձափուկ և այլն: Արարատյան բարբառում այս ածանցը շատ է հանդիպում դաշտային բույսերի, բանջարների անվանումներում՝ թէլուկ, բագկուկ, գէլփըստուկ, գէղավրուկ «մոլախոտ», փըմընձուկ, տըղաքէրուկ, գէլցըկնուկ և այլն: Հանդիպում է նաև մի քանի կցական բարդություններում՝ ականջըրնուկ, ձէնճաբըրնուկ «նվեր, որ տալիս է առաջին անգամ քաղաք գնացողը իր ուղեկցին», գէտաքէրուկ «կոճղ, որը բերում է վարարած գետը», իշվանուկ «երկոտանի ա-

⁴ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1—5, Երևան, 1942—1962:

թոռ», չոբանխափուկ «թուշուն», էրէսծածուկ «շոր, որով ծածկում են օրորոցի երեխայի երեսը»: Այս ածանցը կա հիվանդութիւնների անվանումներում՝ զօրաբնուկ, ջրշրբուկ: Աշտարակի խոսվածքներում այս ածանցը միանում է բայաբներին, կազմում ածական. խրմուկ «շատ խմող», ուտուկ «շատակեր»։ ածուկ «ածան հավ», խրբուկ «վախկոտ», կրտուկ «սուր (դանակ), տրվուկ «բերքատու» և այլն:

Արարատյան բարբառում, ի հակակշիռ արևմտահայ բարբառների, չկա հարակատար դերբայի -ուկ վերջավորութիւնը, հետևապէս այս ածանցը կապ չունի նրա հետ:

Արարատյան բարբառի ածանցների մի մասը ունի համընդհանուր տարածում, իսկ որոշ մասը հանդիպում է միայն այս կամ այն խոսվածքում կամ՝ խոսվածքներից մի քանիստում:

Հնդհանուր տարածում ունեն -ացու, -էղ, -ատ, -էցի, -ըցի, -աղ, -էղէն, -էրէն, -օց, -նօց, -անօց, -իկ, -ուկ, -ակ -ութուն, -ան, -ունց, -իչ, -չի, -իմ և այլ ածանցներ: Անհամեմատ փոքր թիվ են կազմում այն ածանցները, որոնք տարածմամբ սահմանափակ են: -Անուկ և -ացուկ ածանցները կան Ալավերդու, Նոյեմբերյանի, Շամշադինի, Իջևանի, Դիլիջանի խոսվածքներում: Միայն Հոկտեմբերյանում են հանդիպում -էվար, -էնակ, -վէր, -էլէ ածանցները: Արարատյան բարբառում ու նրա ճյուղավորումներում առկա ածանցների ու ածանցման համակարգում նկատվող մյուս օրինաչափութիւնն այն է, որ ոչ բոլոր ածանցները նույն արդյունավետութիւնը ունեն: Կան ածանցներ, որոնք տարածված լինելու հետ միասին, նաև շատ արդյունավետ են և կազմում են շատ բառեր. օրինակ՝ -ակ, -ած, -ական, -ալօր, -ցի, -իկ, -ցու, -ի, -ին: Ածանցներ էլ կան, որոնցով սահմանափակ թվով բառեր են կազմվում, կամ նույնիսկ հանդես են գալիս միայն մի բառում: -Ակի ածանցը կա միայն քեթևակի բառում: -Թօ-ն կա Շամշադինի խոսվածքի միայն թիւանքօ բառում, որը նշանակում է թույլ, անաշխատասեր մարդ: -Մու կա միայն շինծու, -առ՝ գէղառ, -գար՝ ցավագար, -լօշ՝ դանդալօշ բառերում: Սահմանափակ կիրառութիւն ունեն նաև -կէնի (մէդրակէնի, իշակէնի, շաֆարկէնի), -ույթ՝ ըրնույթ «բնավորութիւն», -ուսուկ-դառնուսուկ, ֆաղցըրուսուկ, էղ՝ կանթէղ «ունկ ունեցող, ընկանի», -գունի՝ -արէվգունի և այլն:

Արարատյան բարբառում՝ ածանցման համակարգում, նկատվող օրինաչափութիւններից մեկն էլ հոմանիշ ածանցների առկայութիւնն է: Հոմանիշների թիվը հաճախ հասնում է մի քանիսի, որի շնորհիվ էլ նույն բառը ձևով տարբեր, բայց բովանդակությամբ նույն ածանցներով են ածանցվում: Օրինակ՝ միչնակ-միչնէկ, փօխնակ-փօխնէկ, ջօշական-ջօշանակ-ջօշալտի, գէղական-գէղավօր, պարտական-պարտավօր, լացկան-լացան-լացուկ, վագան-վագօղ-վագկան, հայէրէն-հայէվար-հայէնակ, վարատիչ-վարառան-վարատօղ, հրիսակօղ-հրիսակօկան-հրիսակօկիչ-հրիսակօկիկ, վախան-վախկօտ-վախուկ-վախիկ, յէրգարութիւն-յէրգանֆ, հանաֆօլ-հանաֆվէր, կիսրար-կիսօվի, պօշվօր-պօշէն-պօշանի-պօշօվ, յեմման-յեմմանց, կրգման-կրգմանց, գրլիսած-գրլիում, ուլինֆ-ուլունֆ, յէրգանֆ-յէրգենֆ, միչինֆ-միչունֆ-միչան, առնէլացուկ-առնէլիֆ, տականֆ-տակունֆ, տրնական-տրնուրիկ-տրնածուրիկ-տանու և այլն:

Ածանցների հոմանիշները առաջանում են երկու եղանակով. դրանք կամ հնչյունական կամ ձևաբանական տարատեսակներ են: Հնչյունական

տարատեսակներ ևն ման-մանց, ժէո-ծօո, անֆ-էնֆ, ութ-ուց համանիշ տծանցներու: Չեւրանական տարատեսակ ածանցներ ևն էն-անի-օվ, էրէն-լնակ-էվար, ավօր-ական, ան-իչ, ան-իկ-ուն-ացօղ, կան-նակ-վարի, ակաւ-սվօր, ան-ուկ և այլն:

Արարատյան բարբառում ևս, ինչպես և գրական լեզվում ու այլ բարբառներում, բառերը կարող են ստանալ մեկից ավելի ածանցներ. գրանցից մեկը կարող է լինել նախադաս, մյուսը կամ մյուսները՝ վերջադաս: Բառը կարող է ունենալ մեկից ավելի վերջածանցներ, նախածանցը միայն մեկն է լինում: Դոդոսուց «ծածուկ, թաքուն» բառը, որն արդեն ածանցված է, ունի -ուց ածանցը, կարող է ստանալ նորից մի ածանց՝ -իկ և կազմել գօղտուցիկ: Օտ ածանց ունեցող բոլոր բառերը կարող են ածանցվել նորից, ստանալով ածվերջածանցը՝ կըխտօտած, մըրօտած:

Այսպիսով, Արարատյան բարբառը բավական հարուստ է ածանցներով ու նրանց իմաստային զանազան դրսևորումներով: Այս առումով էլ հայերենի ամենատարածված ու ամենաճշուղիվորված այս բարբառը մեր լեզվի բարբառներում առկա ածանցների ու նրանց իմաստային դրսևորումների մի հանրադրամարային պատկեր է ներկայացնում:

АФФИКСЫ И НЕКОТОРЫЕ ЗАКОНОМЕРНОСТИ АФФИКСАЦИИ В АРАРАТСКОМ ДИАЛЕКТЕ

С. А. БАГДАСАРЯН-ТАПАЛЦЯН

Резюме

В араратском диалекте, в отличие от древнеармянского языка — грабара и современного армянского языка — ашхарабара, как и во всех диалектах армянского языка, мало префиксов, которые имеют только отрицательные значения. По морфологической роли суффиксы делятся на две группы — однозначные и многозначные.

Подавляющее большинство суффиксов араратского диалекта — армянского происхождения, и лишь некоторые заимствованы из других языков (персидского, турецкого, арабского).

Один и те же суффиксы в диалекте имеют более ограниченное значение, чем в древнеармянском или современном армянском языках. Но закономерно и то явление, что многие суффиксы в диалекте придают словам более широкое значение, чем в грабаре и ашхарабаре. Подавляющая часть суффиксов распространена во всех говорах диалекта, но есть и такие, которые свойственны одному или нескольким говорам. Среди суффиксов есть продуктивные, которые присоединяются ко многим словам, и менее продуктивные, встречающиеся в редких, даже единичных случаях.